Յովհաննէսի ձեռքով գրի առնուեցաւ Գրիգոր Մագիստրոսի մեծ արձանագրութիւնը(1)։ Քիչ յետոյ Ղազար Ջահկեցին Հայաստանի մեծ սրբութիւնների շարքում յիշում է նաև «Ամենափրկիչ պատկեր խաչելութեան Տեառն մերոյ Քրիստոսի Աստուծոյ»(2)։

Մաղաքիայի յաջորդն էր Յովհաննէս վարդապետ 1745 թուին և ապա Ազարիա 1755 թուին, որոնք նոյն իսկ կալուածներ են ձեռք բերել վանքի համար(1)։ Ազարիան, ինչպէս երևում է, վերջին վանահայրն էր, որովհետև վանքն արդէն Ջամբռի գրութեան ժամանակ, այսինքն 1765–1767 թուականներին, աւերակ էր(2)։

Է.

Հաւուց Թառի Ամենափրկիչն այժմ գտնւում է Էջմիածնում. ե՞րբ է փոխադրուած այստեղ, ճիշդ թուականը չգիտենք. բայց Շահխաթունեան ժամանակը նշանակում է «զկնի վերջին ասպատակութեանց յայս նահանգ Հայաստանի ի կովկասեան ելուզակաց, եւ ի սպառ անշքանալոյ մենաստանացն, յորոց կարգի եւ մենաստանին Հաւուց Թառայ, բերաւ սքզ պատկեր ի սքզ աթոռ այսր կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի, և կայ այժմ ընդ այլ սրբութեանց ի գանձարանի անդ»(3)։

Լեզգիների կամ Լեկաց երկրորդ արշաւանքը ԺԸ. դարում կատարուել է 1755 թուին, այդ ժամանակներն էլ Գեղարդաձորի (Այրիվանք, Հաւուց Թառ և Աղջոց Ս. Ստեփանոս) վանքերի սրբութիւնները Հաւուց Թառի Ամենափրկչի հետ պէտք է փոխադրուած լինին Էջմիածին. յամենայն դէպս 1768 թուին, երբ Սիմէոն կաթուղիկոսի հրամանով կատարւում էր Մ. Աթոռում եղած սրբութիւնների և հնութիւնների ցուցակագրութիւնը, Ամենափրկիչը մտնում է Ցուցակի մէջ. «Ամենափրկիչն, որոյ պատկերն է փայտեայ։ Եւ ունի ընդ իւր ա. արծաթեայ փոքր սքզ նշան զանձիրով, հանդերձ մահրամայիւք»(4)։

Ո՞րքան հին էր այդ պատկերը և ունեցե՞լ է արդեօք հնագիտական–գեղարուեստագիտական արժէք, չգիտենք. ներկայ պատկերը շինուած է ցուցակագրութիւնից տաս տարի յետոյ, որ մի փայտի արկղ է, երկարութիւնը 82, լայնքը 43 և բարձրութիւնը 11 սմ.։ Arsufnus առաջին երեսի վերայ անկիւններում նկարուած են՝ վերևում՝ ձախից Մատթէոս, աջից Մարկոս, իսկ ներքևում՝ ձախից Ղուկաս և աջից Յովհաննէս։ Մատթէոս նստած է, ծերունի. հագել է կարմիր կապայ և վերան ձգել մոյգ կանաչ վերնազգեստ (տոգայ), մանրանկարչական արուեստի մէջ ընդունուած ձևով. բաց աւետարան ձեռքին հետևեալ գրութեամբ. «Եւ առեալ | զմարմինն | Յովսէփ պա | տեղ սքզ կըտաւովք եւ եդ ի ն | որ գերեզ | մանի զոր փորեաց ի | վիմի եւ թա | ւալեցոյց | եալ (s!) կափա.»։ Աւետարանչից յետոյ նկարուած է սորա նշանակը՝ թեւաւոր հրեշտակ, կարմիր կապայով, կարճթեւանի գեղնաւուն վերնազգեստով։

Մարկոս հագել է գեղին կապայ և աջուսից ձգել կարմիր տոգայ. նա երիտասարդ է, նոյնպէս նստած. ձախ կողմը և աւետարանչի առիւծն է, բաւական տգեղ. աւետարանը բաց է, հետևեալ հատուածով. «Եւ Յովսէփ | գնեաց կըտաւ եւ իջուցեալ զնա պատեաց կըտաւո(վ) եւ եդ ի գե | բեզմանի | զոր էր փորեալ ի վիմէ | եւ թաւա... մի..նին»։

(1) Շահխ. Բ. 293։ Լէզգիների արշաւանքի եւ Աստուածատուր կաթուղիկոսի փախստեան մասին Մարտիրոս Սարկ. Կարրեցու յիշատակարանը Ձեռ. Էջմ. N 666, 205ա։

(2) Դրախտ Ցանկալի. 672։

(3) Շահխ. Ա. 63։

(4) «Դաւթար եւ հաշուագիր անօթից եւ սպասուց սրբ եւ միածնաիջի տաճարիս, թէ ոսկեղինաց եւ թէ արծաթեղինաց, թէ պղնձեղինաց, թէ շորեղինաց, եւ թէ այլ նիւթեղինաց։ Որ ի ՌՄԺԷ (= 1768) թուոջ մերում հրամանաւ սն Սիմէօնի սրգն կթուղկոսին եւ ձեռամբ նորին սպասաւոր Մկրտիչ եւ գրագիր երեմին եւ լուսարար Գրիգոր վրդացն գրեցաւ երկու օրինակ, ի ձեռն միոյ գրողի։ Զորս սրգն IIIրն (նշանակում է կաթողիկոսն) կնքեալ. զմինն եդ լուսրրին. զի առ նա մնասցէ. եւ զմիւսն ի վերհարանոջն եդ ի պահեստի։ Զի ըստ ժամանակի յրժմ գիտել կամիցի որ զհաշիւ սպասուց սրբ տաճարիս, համաձայնուիր երկուց դաւթարաց գիտասցէ»։

(1) Ջամբռ. 279-80։

(2) » 15|. 278։